

ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՐՐՈՐԴ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Սույն թվականի օգոստոսի 16—21 օրերին Ժենի Սենագլ կրոնական կենտրոնում տեղի է ունեցել ուղղափառ եկեղեցիների երրորդ խորհրդակցությունը: Նախորդ երկու ժողովները տեղի են ունեցել, առաջինը՝ 1964 թվականին Դանիայի Աարհուս և երկրորդը՝ 1967 թվականին Անգլիայի Պրիսդոլ քաղաքներում:

Այս խորհրդակցության նպատակն է եղել հարթել բյուզանդական օրթոդոքս և հին արեվելյան ուղղափառ եկեղեցիների միջև դարեր շարունակ գոյություն ունեցող դավանաբանական տարակարծությունները, որոնք սկիզբ էին առել տակավին 451 թվականի Քաղկեդոնի ժողովից:

Հանուն Հայաստանյայց եկեղեցու և Մայր Աթոռ ս. Էջմիածնի խորհրդակցությանը մասնակցում էին Վիեննայի հայոց հոգևոր հովիվ տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը և Ժենի հայոց հոգևոր հովիվ տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը:

Խորհրդակցության հինգ օրերի ընթացքում գլխավորապես քննվել և ուսումնասիրության նյութ են դարձել հետևյալ հարցերը՝ Քաղկեդոնի ժողովը, Քաղկեդոնին նախորդող և հաջորդող պատմական դեպքերը, տիեզերական ժողովների դերը եկեղեցու դավանաբանության և հոգևոր կյանքում, Դ, Ե, Զ և Է «տիեզերական» կոչված ժողովների ընդունման կամ մերժման հարցը, տիեզերական ժողովների դավանաբանական որոշումներն ու կանոնները, միակամյա վարդապետությունը, երկու ընտանիքների ավանդություններին պատկանող սրբերը և փոխադարձ դատապարտություններն ու անեծքները:

Ժողովում ընթերցվում են մի շարք ուսումնասիրություններ: Մեր եկեղեցու անունից տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը հանդես է գալիս «Առաջին երեք տիեզերական ժողովները և նրանց նշանակությունը հայ եկեղեցու համար» զեկուցումով:

Հայ եկեղեցու պատգամավորները գործոն մասնակցություն են ունեցել ժողովի աշխատանքներում: Նրանք զանազան առիթներով պարզել և բացատրել են հայ եկեղեցու դավանաբանությունը, տեսակետը՝ զանազան հարցերի մասին, դիրքը՝ Քաղկեդոնի ժողովի նկատմամբ և հերքել են մի շարք թյուրիմացություններ և սխալ մեկնաբանություններ հայ եկեղեցու պատմության և անտվածաբանության վերաբերյալ: Նրանք շեշտել են քույր եկեղեցիների հետ համագործակցության անհրաժեշտությունը, սակայն հրատակորեն ժխտել են վարչական վերամիության կարելիությունը:

Ժողովը մշակում և հրապարակում է երկու տեղեկագրեր, որոնցից առաջինը ամփոփում է խոսակցությանց և վիճաբանությունների բովանդակությունը, իսկ երկրորդը՝ թելադրություններ և առաջարկներ, որոնցից գլխավորներն են՝ փոխադարձ այցելություններ եկեղեցիների պետերին, եպիսկոպոսների և աստվածաբանների կողմից: Նման այցելություններ անցյալում մեծապես նպաստել են քույր եկեղեցիների միջև փոխադարձ վստահության, հասկացողության, համաձայնության և սիրո ամրապնդմանը:

Սույն ժողովի բովանդակության և եզրակացությունների խմբագրության հանձնախմբի անդամ է ընտրվել տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը: Նա նույնպես ընտրվել է հինգ անդամներից մեկը այն հանձնախմբի, որը պիտի շարունակի կազմակերպել հետագայում համանման խորհրդակցություններն ու աշխատանքները:

Օգոստոսի 21-ին, ուրբաթ օրը, ժողովն ավարտել է իր նստաշրջանը: